ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1947, № 6 *Общественные науки*

Կ. Մելիք-Օհանջանյան

ՏԻՐԱՆ-ՏՐԴԱՏԻ ՎԵՊԸ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ[1]

Մեր բանասիրությունը վաղուց գիտեյ ու որոշ չափով ապացուցել է, որ Բուզանդի Պատմության հիմնական աղբյուրն է եղել ֆոլկլորը։ «Փավստոս Բուզանդի պատմության մեջ,—ասում է պրոֆ. Մ. Աբեղյանը,—ամեն ընթերցող էլ, որ ըմբռնում է ժողովրդական պատմվածքի հոգին, միմիայն ժողովրդական ոճ և վիպասանական եղանակ կը գտնի։ Հ. Գելցերի և ավելի Ստ. Մալխասյանցի աշխատություններից հետո՝ այլևս կասկած չկա, որ այդ գրքի գլխավոր աղբյուրները եղել են ժողովրդական զրույցները, վեպեր և նույնիսկ երգեր... Գրավոր աղբյուր, ինչ որ նյութին է վերաբերվում, դժվար թե գործածած լինի նա, ուստի և ոչ մի թվական չի հիշում, այլ, ինչպես ժողովուրդն յուր վեպի մեջ, միայն դեպքերի հաջորդությունն է պահում»։

Մ. Աբեղյանը բնորոշելով Բուզանդյան պատմվածքի վիպական բնույթը, ոճն ու երանգը, ապա՝ հիմք ընդունելով այդ «պատմության» հիմնական առանցքը, որի շուրջը պտտում, բոլորում են 4-րդ դարի Հայաստանի «պատմական» իրադարձությունները, այդ հին վեպը կոչում է «Պարսից պատերազմ»։ «Դա եղել է,—ասում է նա,—մի ընդհանուր ազգային վեպ, որի մեջ իրենց տեղն են ունեցել հայ թագավորները և երկրի զանազան իշխաններ, բայց գլխավորապես Տարոնի և Սասունի տեր Մամիկոնյանք, որոնք սպարապետ և արքայորդիների դայակ են եղել։ Նրանց մասը խառն է գրեթե ամեն բանի մեջ, և վեպի պատմությունները մեծ մասամբ նրանց պարծանքի համար են հյուսված, այնպես որ վեպը դառնում է Մամիկոնյանց վեպ»։

«Պարսից պատերազմ» վեպի մեջ ծավալված կռիվը, ինչպես Բուզանդն է ավանդում, տևում է 8–9 տասնամյակ։ Փոխվում, անցնում-գնում են հերոսները, բայց հայ-պարսկական պատերազմը հարատևում է և սերնդից-սերունդ փոխանցվում։ Հայերի կողմից ժառանգաբար հանդես են գալիս Արշակունի թագավորները և վերջիններիս զուգընթաց սրանց հավատարիմ և անփոխարինելի հերոս սպարապետներ՝ Մամիկոնյանները, իսկ պարսիկների

[1] Զեկուցված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների Բաժանմունքի գիտական սեսիայում 1946 թ. հունիսի 20-ի նիստին.— Տպագրվում է փոքր կրճատումներով։

[2] Հ. Գելցեր. Փ. Բյուզանդ, թարգմ. Հ. Թորոսյան, Վենետիկ, 1896, էջ 31—36, 38 և այլն.

[3] Ստ. Մալխասյանց. Փավստոս Բուզանդի Պատմություն, Վենետիկ, 1896.

[4] Մ. Աբեղյան. Հայ ժողովրդական վեպը. արտատպ. «Ազգ. հանդ.», Թիֆլիս, 1908, էջ 222—212.

[5] Մ. Աբեղյան. անդ, էջ 224.

կողմից՝ պարսից արքաները (ըստ Բուզանդի՝ միայն երկուսը՝ Ներսեհ և Շապուհ) և սրանց միշտ փոփոխվող զորավարները։

Մ. Աբեղյանը՝ հենվելով հայ Թադավորների և սրանց սպարապետների հաջորդականության վրա, առանձին-առանձին որոշում է նաև «վեպի սերունդները, կամ, մեր այժմյան վեպի բառով, «ճյուղերը», որով և ժողովրդապես կվերականգնվի,—ասում է նա,—վեպի ընդհանուր բովանդակությունը»։ Ըստ նրա ստորաբաժանման՝ վեպի սերունդները կամ «ճյուղերն» են՝ 1. Խոսրով-Մամիկ-Կոնակ, 2. Տրդատ-Արտավազդ (սրանք հանդես են գալիս Սեբեոսի և Մովսես Խորենացու պատմությունների մեջ), 3. Խոսրով-Վաչե, 4. Տիրան և Արշակ, Արտավազդ և Վասակ 5. Պապ և Վարազդատ—Մուշեղ, և 6. Մանվել-Արշակ։[1]

Անվանի գիտնականը «Հայ ժողովրդական վեպը» լույս ընծայելուց հետո չորս տասնամյակ անց՝ իր մեծարժեք «Հայոց հին դրականության պատմության» մեջ նորից և այս անգամ շատ ավելի մանրամասն վերլուծում է նախորդ աշխատության էջերում հարևանցի արծարծած թեզերն ու մտքերը, դիտողություններն ու մտածությունները, մանրամասն քննության է առնում նաև «Պարսից պատերազմ» վեպի բովանդակությունը, իշխող գաղափարախոսությունը, հերոսների կերպարներն ու իդեալները, ազնվականության նիստն ու կացը, վեպի արտահայտչական հնարները ու թերևս՝ եղանակները և այլն։

Ապացուցված համարելով իր հիմնական միտքը, որ Բուզանդի «Պատմությունը», բացի մի քանի կրոնադավանական հատվածներից և կրոնական-եկեղեցական զրույցներից, որոնք հեղինակի կողմից ներմուծվել են «Պարսից պատերազմ» վեպի մեջ,—մի վիպական միասնություն ու ամբողջականություն է կազմում, ինչպես, օրինակ, «Շահ-Նամենն» և «Սասնա Ծռերը», Մ. Աբեղյանը համարձակ դնում է նաև այդ մեծ վեպի պատմվածքի ձևի ու ոտանավորի չափի հարցը։ Նա անկասկած չափածո է համարում այդ վեպը և ասված այն չափով, որով ավանդվում է մեր օրերում «Սասնա Ծռեր» ժողովրդական-վեպը։ Հենց այս համոզմամբ էլ «Հայոց հին դրականության պատմության» մեջ Բուզանդից քաղած բոլոր մեջբերումները նա տողատում է ոտանավորի ձևով։

Խոսք չկա, Մ. Աբեղյանի թեզն ու ապացույցները «Պարսից պատերազմ» ազգային վեպի մասին ճիշտ են և համոզիչ, բայց և այնպես մենք չենք կարող անառարկելի ընդունել նրա տեսությունը նաև այդ վեպի ձևի մասին, որ համատարած ոտանավորի ձևով տողատված է նրա գրքի մեջ։ Դա չափազանցություն է։ Այդ նույն եղանակով կարելի է դյուրությամբ նաև մեր այլ հին հեղինակների պատմությունների մեծ մասը տողատել։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» ուսումնասիրությամբ զբաղված գիտնականների մեծ մասը (ոմանք ընդհանուր բնութագրությամբ, մյուսները մանրամասն վերլուծու-

[1] Մ. Աբեղյան, անդ. էջ 114—115։

[2] Մ. Աբեղյան, անդ. էջ 116—121։

[3] Մ. Աբեղյան. «Հայոց հին գրականության պատմություն». Գիրք առաջին (սկզբից մինչև 10-րդ դ.), Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1944 թ., էջ 173—248։

թյամբ) հանգել է այն եզրակացության, որ վիպական տարրը այդ գործի մեջ գերակշիռ է. նույնիսկ ազգային ամբողջական վեպ է, որը որոշ չափով կերպարանափոխվել է, աղարտվել անհատ, այն էլ հոգևոր կոչում ունեցող հեղինակի գրչի տակ։

Արդ, եթե «Պտրսից պատերազմը» ժողովրդական վեպ է, ապա նա պետք է այլայլոխված ու բանաստեղծական ընկալումով վերարտադրեր, ավանդեր, վիպեր հայ ժողովրդի իրական պատմական կյանքի նշանավոր և բախտորոշ դեպքերն ու հերոսական դեմքերը։ Ժողովրդական վեպը պատմական վավերագիր չէ. պատմությունն էլ առանց ճշգրիտ ժամանակագրության պատմություն չէ—«ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան», ասել է դեռևս Մովսես Խորենացին, ուստի անհրաժեշտ է վիպականը զատել պատմականից կամ ճշգրտել վեպի պատմական աստառը։ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը», մասնավորապես և հատկապես «Պարսից պատերազմ» ազգային հերոսական վեպը համարյա չի ուսումնասիրվել վերը շարադրածս տեսանկյունով. եթե չհաշվենք հանգուցյալ բանասեր Ստ. Կանայանցի լայն ծրագրված, բայց ինչ ինչ պատճառներով հենց ներածության սահմաններում ընդհատված հետազոտությունը[1] և տողերս գրողի հակիրճ հետախուզությունը հայ-իրանական վիպական զուգահեռների կապակցությամբ Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմությունների մեջ։[2] Բուզանդի «Պատմության» ժանրակրկիտ ուսումնասիրությունն այս տեսանկյունով մեծապես կնպաստեր այդ հուշարձանի բազմակողմանի արժեքավորման գործին, կսահմանագծեր բանաստեղծական-վիպական հնարանքն ու ստեղծագործական գյուտերն իրական-պատմական վավեր իրադարձությունից, կորոշեր նրա արժեքը թե որպես գեղարվեստական երկ և թե իբրև Հայաստանի պատմության հիմնական սկզբնաղբյուր։

Բուզանդի «Պատմության» ամբողջական ուսումնասիրությունն այս տեսագծով մեզ շատ հեռու կտաներ։ Այստեղ ժենք մեզ առաջադրում ենք շատ սահմանափակ ու կոնկրետ մի խնդիր։ այն է՝ վերլուծել այդ «Պատմության» միայն մեկ դրվագը, ըստ Մ. Աբեղյանի տերմինաբանության՝ մեկ «սերունդը», մեկ «ճյուղը»—Տիրանի ճյուղը։ Մեր նպատակն է անջատել այդ «ճյուղի» վիպական-բանաստեղծական տարրը իրական-պատմականից, ցույց տալ, թե ինչ բաղադրիչ վիպական էպիզոդներից է հարակցման կարգով կազմված վիպական-բանաստեղծականը։

1

Տիրան թագավորի պատմությունը Բուզանդի «Հայոց պատմության» մեջ թերևս ամենանվազ արժեք ունեցող պատմական հատվածն է, որը շարադրված է նույն «Պատմության» III գրք. ԺԲ—ԻԱ գլուխներում։ Այդ տասը հաջորդաբար իրար հետևող գլուխներից միայն վերջին Ի և ԻԱ գլուխներն են վերաբերում Տիրանի ժամանակաշրջանի արտաքին քաղա-

[1] «Լրաբեր», 1907—8 թ. թ.։

[2] Մ ե լ ի ք-Օ հ ա ն ջ ա ն յ ա ն. Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամեում» ու հայ մատենագրության մեջ. «Ֆիրդուսի» մոգովածու, Երևան, 1934, էջ 56—100։

քական իրադարձությունների պատմությանը։ ԺԸ գլուխը նվիրված է ֆեոդալական Հայաստանում սովորական միջնախարարական գժտություններին՝ու կռիվներին, որոնց հետևանքով Հայր Մարդպետը կոտորել է տալիս «զաղգս նախարարացն Հայոց». մյուս գլուխները (ԺԲ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ և ԺԹ) մեր առաջ ժանրամասն ծավալում են հայ եկեղեցական միջավայրում տեղի ունեցած իրադարձությունները, ավանդում են մեզ Հուսիկի, սրա ժառանգների, ինչպես և կաթողիկոսական աթոռի թեկնածու ասորի Դանիել եպիսկոպոսի (ԺԴ գլուխը վարքաբանական մի կոմպիլյացիա է և դժվար թե այդքան ընդարձակ եղած լինի Բուզանդի սկզբնական խմբագրության մեջ) և վերջապես, Փառեն և Սահակ հայրապետների մասին (ԺԶ և ԺԷ)։

ԺԳ գլուխը հեղինակի մի վերին աստիճանի հետաքրքրական բնութագրություն՝ ու խորհրդածություններն են այդ ժամանակաշրջանի հայ հասարակության կենցաղի ու բարոյական դիմանկարի մասին։

Ներքին պատմության, այն էլ գլխավորապես հայ եկեղեցուն վերաբերող հատվածները շատ ընդհանուր, շաբլոն բնույթ կրելով, ասում ենք՝ շաբլոն, որովհետև նույն մտքերն ու խորհրդածությունները, եկեղեցական դեպքերն ու իրադարձությունները բազմիցս տարբեր հարաստությամբ կրկնվում են Բուզանդի «Հայոց պատմության» մեջ,—ոչինչ չեն պարզում և նրանց հիման վրա չի կարելի ժոտուստ լուսաբանել այն ոգբերգական վիճակը, որը բաժին էր ընկել հայ պետականությանը Տիրանի ժամանակաշրջանում։

Պատմա-քաղաքական կողմնորոշման համար միակ հենակետը, բռնատեղը Բուզանդի III գպրության այն վերջին գլուխներն են (Ի և ԻԱ), որոնք նվիրված են արտաքին պատմությանը, միջազգային բարդ հարաբերություններին։ Այդ կողմնորոշումը, ապա և պատմական իրադարձությունների վավերագիր ճշտորոշումը շատ ավելի է դյուրանում, քանի որ մենք ձեռքի տակ ունենք մի շարք, ճիշտ է, ֆրագմենտար և փոքր ինչ սուբեկտիվ, բայց և այնպես ժամանակակից կամ ժամանակով բավականաչափ մոտ կանգնած օտար պատմական ազբյուրներ ու վավերագրեր։ Վերջիններիս օգնությամբ հնարավոր է գոնե մոտավորապես փարատել ժամանակագրությունից գուրկ Բուզանդյան պատումը, ժամանակի ու տեղի՝ գործողության վայրի շրջանակների մեջ դնել այն և հշգրտել այդ իրադարձության ընթացքում հանդես եկած գործող անձերի տեղն ու դերը։

Արդ, ինչ քաղաքական-պատմական խոշոր իրադարձություններ են տեղի ունեցել Մերձավոր Արևելքում, որոնք կապված են եղել 3-րդ դարի վերջին և 4-րդ դարի Հայաստանի հետ։

Այդ հարցին խիստ շահեկան հետազոտություն է նվիրել ականավոր պատմաբան՝ պրոֆ. Ն. Ադոնցը իր դժբախտաբար անավարտ հրատարակված՝ «Փավստոսը որպես պատմագիր» աշխատության մեջ։[1]

[1] Н. Адонц. Фауст Византийский, как историк. „Христианский Восток", 1917—1920 г. г., т. VI, вып. III, Петроград, 1922, էջ 235—272 շրնկ., բայց շարունակությունը չի տպագրված։ Ն. Ադոնցը ծանոթության մեջ գրում է. «Ներկա էսյուղը վաղուց է գրված և այժմ տպագրվող մասը գեկուցված է տակավին 1906 թ. դեկտեմբերի 21-ին Ռուս. Հնագիտ. Ընկեր. Արևելյան Բաժնի նիստում, հետևյալ վերնագրով. «Հռոմա-պարսկական հարաբերությունները 4-րդ դարի առաջին կեսին և հայկական ավանդությունները նրանց մասին»։

Ինչպես իրավացի նկատում է Ն. Ադոնցը, Հայաստանին քաղաքականապես տիրանալու համար Բյուզանդիայի և Պարսկաստանի վարած պայքարի ընթացքում երկու բախտորոշ և վճռական պատերազմներ են տեղի ունեցել, «երկու ծանրակշիռ մոմենտներ»՝ 298 և 363 թ. թ.։ «Այդ մոմենտների պարագաները. ասում է Ն. Ադոնցը, բավականաչափ հայտնի են արևմտյան աղբյուրներից և պարզորոշ գաղափար են տալիս երկու ախոյանի գիրքի մասին վեճի առարկա Հայաստանի նկատմամբ։ Իսկ ինչ վերաբերում է 298 և 363 թ. թ. մեջ տեղի ունեցած իրադարձություններին, ապա արևմտյան պատմագիրների տեղեկություններն այդ մասին խիստ աղքատիկ են։ Հայ Փավստոսն ունի որոշ դրույցներ, որոնք վերաբերում են հիշյալ ժամանակաշրջանին, և սրանց պատմական հիմքը պարզորոշվում է՝ մոտուստ ծանոթանալով գործի այն պարագաներին, որ հաղորդում ես արևմտյան հեղինակները»։[1]

Երրորդ դարի վերջերին Հայաստանն ընդունում է Հռոմի գերագույն հովանավորությունը։ Շապուհ I-ի որդի Ներսեհը [=Նարսե(հը) 293 թ. սեպտ. 9—302 թ. ըստ Th. Noldeke-ի] 295 թ. հարձակվում՝ է Հայաստանի վրա ու գրավում երկիրը՝ „Narseus primus Armeniam Romano juri obnoxiam occuparat,"[2] — վկայում է Ամմիանոսը (Ammian, XXIII, 5).

Դիոկղետիանոս կայսրը Հռոմի շահերի, ինչպես և Հայաստանի պաշտպանությունը հանձնարարում է իր իշխանակից և փեսա Գալերիոս Մաքսիմիանոս կեսարին։ Սա զորքով դուրս է գալիս պարսիկների դեմ և խորտակիչ պարտություն կրում, որի համար անարգանքի է ենթարկվում կայսրից։ Սակայն, երկու տարի անց՝ նա առնում է Դիոկղետիանոսի հավանությունը և կրկին արշավում պարսիկների վրա։ Այս անգամ նա ռազմական գործողությունները Միջագետքի տափաստաններից փոխադրում է Հայկական լեռնաշխարհը և ջախջախիչ հարված հասցնում պարսիկներին, ստիպում նրանց քառասնամյա խաղաղության ամոթալի պայմանագիրը ստորագրելու (297/8—337 թ. թ.)։

Գալերիոսի այդ պատերազմները նկարագրել են 4-րդ դարի լատին պատմագիրները՝ Ավրեղիոս Վիկտորը, Եվտրոպիոսը և Ռուփուս Փեստուսը։

Մեր առաջիկա դիտողությունները պարզ ու որոշ դարձնելու նպատակով՝ համառոտակի մեջ ենք բերում այդ հեղինակների հաղորդումները։

Գալերիոսն արշավում է Պարսից բանակի վրա.

A quis primo graviter vexatus, contracto confestim exercitu e veteranis ac tironibus, per Armeniam in hostes contendit—quae ferme sola seu facilior vincendi via est. Denique ibidem Narseum regem in ditionem subegit, simul liberos coniugesque et aulam regiam. Adeo victor, ut ni Valerius, cujus nutu omnia gerebantur, incertum qua causa abnuisset, Romani fasces in provinciam novam ferrentur.—Aur. Victor, De Caesaribus, XXXIX.

[1] Ն. Ադոնց, անդ. էջ 236։

[2] Ձևերի տակ չունենալով համապատասխան տեքստեր՝ հույն և լատին հեղինակներից կատարած մեջբերումները քաղում ենք պրոֆ. Ն. Ադոնցի հիշյալ աշխատությունից։

[«Նախ՝ նա ծանր պարտություն կրեց, սակայն վետերաններից և նորակոչիկներից զորք կազմելով՝ նա արշավեց թշնամիների վրա Հայաստանի վրայով, որը մի ամուր բազա ու ավելի դյուրին հաղթելու ուղի է։ Վերջապես, հենց այնտեղ Գալերիոսը ջարդեց Նարսե (=Ներսեհ) թագավորին, գերեց նրա երեխաներին ու կանանց և ամբողջ արքունիքը։ Հաղթությունն այնքան փայլուն էր, որ եթե Վալերիոսը,[1] որի հրամանով կատարում էր ամեն ինչ, չհակառակեր, հայտնի չէ, թե ինչ պատճառով, ապա հռոմեական իշխանությունը կտարածվեր նոր պրովինցիայի վրա»։

Եվտրոպիոսը նույնը հաղորդում է ավելի հանգամանորեն։ Գալերիոսի առաջին պարտությունից հետո՝ նա գրում է.

Mox tamen per Illyricum Moesiamque contractis copiis rursus cum Narseo, Hormisdae et Saporis avo, in Armenia Majori pugnavit successu ingenti, nec minore consilio simuique fortitudine, quippe qui etiam speculatoris munus cum aitero ac tertio equite susceperit. Pulso Narseo castra ejus diripuit. Uxores, sorores, iiberos cepit, infinitam extrinsecus Persarum nobilitatem, gazam Persicam copiosissimam. Ipsum in ultimas regni solitudines egit.—Eutropii Breviarium historiae Romanae. l, IX. c. 24—25.

[«Սակայն, շուտով զորք հավաքելով Իլլիրիայում և Միդիայում՝ Գալերիոսը կրկին մարտի ելավ Հորմզդի ու Շապուհի պապ Նարսեհի դեմ Մեծ Հայքում մեծագույն հաջողությամբ, շնորհիվ ոչ նվազ մտածվածության (nec minore consilio), ինչպես նաև քաջության, ընդ որում նա հանձն առավ դետքի (=հետախույզ) պարտականությունը երկու կամ երեք ձիավորի հետ։ Ետ շպրտելով Նարսեհին, Գալերիոսը խորտակեց նրա բանակը, բռնեց (նրա) կանանց, քույրերին, երեխաներին, բացի դրանից անթիվ պարսիկ ազնվականներ և հարստագույն պարսից գանձարանը։ Ինքը (=Նարսեհը) փախավ (իր) թագավորության ծայրագույն անապատները»։

Ռուփուս Փեստուսը՝ խոստովանելով Գալերիոս Մաքսիմիանոսի սկզբնական պարտությունը, նույն պատերազմի մասին գրում է, որ Գալերիոսը նոր զորքով կրկին ելնում է պարսիկների դեմ և... in Armenia Majore ipse Imperator cum duobus equitibus exploravit hostes: et cum viginti quinque millibus militum superveniens castris hostilibus, subito innumera Persarum agmina adgressus, ad internecionem cecidit. Rex Persarum Narseus effugit; uxor ejus et fillae captae sunt, et cum maxima pudicitiae custodia reservatae. Pro qua admiratione Persae non modo armis, sed etiam moribus, superiores esse Romanos confessi sunt; ac Mesopotamiam cum Transtigritanis quinque regionibus reddiderunt. Pax facta, usque ad nostram memoriam Reipublicae utilis perduravit.—Rufi Festi Breviarum, c. XXV.

[«...Ինքը կեսարը երկու ձիավորի հետ անձամբ հետախուզեց Մեծ Հայքում թշնամիներին և քսան և հինգ հազար զորքով վրա հասավ թշնամու բանակին, հանկարծակի հարձակվեց պարսիկների անթիվ զորքերի վրա և ոչնչացման ենթարկեց։ Պարսից թագավոր Նարսեհը փախավ։ Նրա կինն

[1] Այստեղ Ն. Ադոնցը սխալմամբ հավասարություն նշան է դրել՝ Վալերիոս=Դիոկղեսիանոս։ Սա Ավրելիոս է կոչվել, մինչդեռ Գալերիոսը՝ Maximianus Valerius. Խոսքը սրա մասին է։

ու աղջիկները բռնվեցին և մեծագույն ակնածությամբ պահպանեցին նրանց ամոթխածությունը։ Այդպիսի վերաբերմունքից հիացած՝ պարսիկները խոստովանում էին, որ հռոմայեցիները ոչ միայն զենքով, այլ և բարքով գերազանցում են (նրանց)։ Եվ Միջպետքը հինգ Անդրտիդրիսյան նահանգների հետ նրանք վերադարձրին։ Խաղաղությունը կնքվեց և հարատևում է ցարդ հօգուտ կայսրության»)։

Վերը վկայակոչած երեք լատին պատմիչների հաղորդումները ոչ միայն նման են իրար ընդհանուր բովանդակությամբ, այլ և նրանց շարադրանքի հաջորդականությունը, նույնիսկ տեղ-տեղ դարձվածքներն ու արտահայտությունները բառացի համընկնում են, մի հանգամանք, որ հիմք է տալիս Մարտին Շանցին և Ն. Ադոնցին ենթադրելու այդ երեքի համար էլ ներկայումս կորած մի ընդհանուր սկզբնաղբյուր։[1]

Խոշորագույն քաղաքական-ռազմական այս միջադեպը, երկու դժվարահաշտ ախոյանների արյունալից բախումը, հայերի ոխերիմ թշնամիների՝ պարսիկների վերջնական ջախջախումը, որի ժամանակ գերի են ընկնում արքայից արքայի կանայք, ժառանգները, այլ հարազատներն ու պալատական իշխանավորները, չէր կարող, հարկավ, իր արձագանքը չունենալ հայ աշխարհում, մանավանդ որ այդ հաղթության պտուղները՝ մյուս հարևան ժողովուրդների համեմատությամբ առաջին հերթին և առանձնապես պիտի վայելեին հայերը, ազատագրվելով Սասանյանների լծից։

Եվ իրականում այդպես էլ եղել է։ Հայ պատմագիրներից՝ Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին և Մեսրոպ երեց Վայոց-ձորեցին յուրովի անդրադառնում են այդ շշմեցուցիչ ռազմա-քաղաքական իրադարձությանը։ Եթե Մովսես Խորենացին՝ ըստ իր սովորության՝ քննադատաբար է վերաբերվում նյութին, շարադրում է միայն՝ իր կարծիքով՝ հավաստին, պատմականացնելով իրադարձությունը՝ դեպքերն ու դեմքերը, և խուսափում է «առասպելականից», ոչ-իրական թվացողից, ապա Բուզանդն ու Մեսրոպ երեցը պատմական վավերականությամբ չեն տարվում, հանդես չեն բերում որևէ քննադատական մոտեցում, այլ անբռնազբոս շարադրում են այն, ինչ որ ավանդաբար հասել է նրանց։[1] Եվ չնայած մեր այս հեղինակների հասկացության ու գրական-պատմագիտական մոտեցման խիստ արտահայտված տարբերությանը, այնուամենայնիվ նրանք որոշ չափով իրար լրացնում են, և պատմական իրադարձության ընդհանուր պատկերն ամբողջացնում։ Մենք հատկապես քննության ենք առնելու Բուզանդի ավանդածը, տեղ-տեղ միայն վկայակոչելով նաև Մովսես Խորենացուն և Մեսրոպ երեցին։

Այդ պատերազմն իր ճակատագրական վախճանով և վճռական պատմա-քաղաքական հետևանքով այնքան բացառիկ և անկրկնելի է եղած, որ դժվար թե նույնությամբ երկրորդած լինի հունա-պարսկական հակամարտության դարավոր պատմության մեջ։ Բացառիկ չէ եղած թե հույն և թե պարսիկ բանակների գլխովին ջախջախումը, բայց անպայման եզակի է մի ամբողջ զորքի այնպիսի կործանումը, որպիսին տեղի է ունեցել 297 թ. երբ Պարսից թագավորը՝ անակնկալ հարձակման ենթարկվելով՝ «ավազա-

[1] Ն. Ադոնց, «Նդ. էջ 239։

[1] Մեսրոպը հիմնականում ցայտում է Բուզանդի ավանդածը, սեղ սեղ անգամ բառացի իր տերթին նա ունի մի այլ մեկ անհայտ, աղբյուրից վերցրած լրացումներ։

պուրծ ճողոպրեալ փախչէր», «ընդ սուր զամենայն բանակն հանէին» և «եւ առին զկապուտ դաւար բանակին, զկանայս Թագաւորին և զրամբիշն, ե զբանուկան ընդ նոսին, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին՝ ի դերուԹիւն վարէին զկանայս նոցա և զգանձս և զկեանս և զկազմած նոցա...»[1] Կրկնում ենք՝ դա մի եղակի իրադարձուԹյուն է եղած։ Մինչդեռ այդ նույն պատերազմական մեծ իրադարձուԹյունը համարյա նույնուԹյամբ, անգամ բառացի, միայն հայ և պարսիկ Թագավորների ու զորավարների անունների փոփոխուԹյամբ, Բուզանդը մանրամասն պատմում է նաև V դպրուԹյան Բ գլխում և ապա վերհուշի կարգով այդ դեպքին անդրադառնում նաև այլուր։ այսպես, օրինակ, առաջին դեպքում հանդես են գալիս՝ կայսր (անանուն և վերջում՝ Վաղես կայսր), Տիրան ե Ներսեհ Թագավորներ, իսկ զորավարներից՝ Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականը։ երկրորդ դեպքում՝ Թագավորներ՝ Պապ և Շապուհ, կայսրի փոխարեն ստրատելատ Տերենան ու կոմս Ադի, զորավար՝ Մուշեղ սպարապետ։

Այս կրկին պատմվածքը Թերևս արդյունք է հայ պետականուԹյան մեջ 4-րդ դարում տեղի ունեցած այն ողբերգական հեղաշրջումների, որոնց զոհ են գնացել հաջորդաբար հայ Թագավորները՝ Տիրան, Արշակ և փոքր ինչ այլ պայմաններում նաև Պապը։ Ժողովուրդը սիրում է անալոգիաներով մտածել։ Երկու իրար նման իրադրուԹյուններ ժողովրդի հասկացուԹյան մեջ անպայման պիտի ունենան հար և նման հետևուԹյուններ, մի անալոգիկ ընԹացք և վերջանք։ Ողբերգական են եղել Տիրանի, սրա որդի՝ Արշակի, սրա որդի՝ Պապի ԹագավորուԹյան տարիները։ Դրանք բոլորն էլ եղերական վախճան են ունեցել, իսկ նրանց ԹագավորուԹյան սկիզբը նույնպես անալոգիկ իրադրուԹյան արդյունք է։

Այսպես, եԹե առաջին դեպքում Տիրանի ԹագավորուԹյունը ողբերգական վախճան է ունենում (կուրացում, դերեվարուԹյուն, դահաղրկում) և Թագավորում է նրա որդին՝ Արշակը, ապա երկրորդ դեպքում՝ Արշակի ԹագավորուԹյունն է ողբերգական վերջանք ունենում (բանտարկուԹյուն, եղերական վախճան) և Թագավորում է նրա որդին՝ Պապը։ Երկու դեպքում էլ պարսիկները հայերի ոխերիմ Թշնամիներն են և հայ ԹագավորուԹյունը կործանողներ, իսկ հույները բարեկամ, դաշնակից ու ԹագավորուԹյունը վերականգնողներ։ Երկու դեպքում էլ պարսիկների նենգ քաղաքականուԹյամբ կործանման դուռը հասած Հայաստանի պատգամավորների հրավերով են հույները օգնուԹյան հասնում հայերին և միահամուռ ուժերով ջախջախում պարսիկներին։

Հենց այս անալոգիկ հանգամանքներով է բացատրվում այն, որ վավերական պատմուԹյամբ վկայված մի մեծ ռազմա-քաղաքական իրադարձուԹյուն Բուզանդը, քաղելով ոչ Թե գոկումենտալ աղբյուրներից, այլ ժողովրդական զրույցներից, ժողովրդական վիպասանուԹյունից՝ կրկին պատմում է երկու, առնվազն քառորդ դարով իրարից բաժանված, պատերազմների նկարագրուԹյան ժամանակ։ Այդ պատերազմների նպատակն էր վրեժ լուծել պարսիկներից, ազատագրել Հայաստանը Թշնամիների լծից և գահ

[1] Որքան նման է Բուզանդի այս պարբերուԹյունը Եվարոպիոսի վկայուԹյանը. կարծես, մեկը մյուսից է օգտվել կամ նրանք ունեցել են մի ընդհանուր աղբյուր։

[2] Բուզանդ, V, Դ, ԼԵ և այլն։

բարձրացնել օրինական ժառանգներին՝ առաջին դեպքում Արշակին, երկրորդ՝ Պապին։

Վերջին ռազմական միջադեպին հաջորդում է Շապուհի գոռունակության և երախտադիտության գունագեղ վիպական արտահայտությունը՝ «Ճերմակաձին գինի արբցէ»։

Բուզանդի այս կրկին պատմվածքը որոշ նրբություններ է ավելացնում նույն «Հայոց պատմության» III դպր. Ի և ԻԱ գլուխների բովանդակությանը, իսկ սա մի ամբողջական, գեղեցիկ ու կառուցիկ ժողովրդական վեպ է, որը սկզբից մինչև վերջը տրամաբանորեն ու հոգեբանորեն զարգանում է։ Եվ իսկապես, եթե բուզանդյան շարադրանքից հանելու լինենք քրիստոնեական-ուսուցողական մի քանի փոքրիկ պարբերություններ, որոնք քրիստոնյա-հեղինակի գրչի հավելյալ, եկամուտ ներմուծումներ են, թերևս միջարկություններ հետագա խմբագրողի կողմից, ապա սխալված չենք լինի, եթե ասենք, որ դա քանիցս հիշատակված խոշորագույն քաղաքական-պատմական իրադարձությունների ժողովրդական-վիպական վերարտադրությունն է։ Այստեղ ցայտուն արտահայտված են էպիկական հուշարձաններին հատուկ բոլոր ստեղծագործական հնարներն ու եղանները, օտարաժուտ մոտիվների կոնտամինացիան, ինչպես նաև անխուսափելի անաքրոնիզմը, ցիկլավորումի և ապացիկլումի օրինաչափ ձգտումն ու տենդենցը։ Ստորև մենք մանրամասն վերլուծության կենթարկենք վիպակերտության այդ հիմնական տարրերը տվյալ դեպքի մեջ։ Արդ տեսնենք՝ ո՞րն է առկա վեպի կառուցվածքի հիմնական սխեման։

1. «Բարեկամութիւն» և «յոյժ խաղաղութիւն» է տիրում Հայոց և Պարսից երկու հարևան թագավորների միջև։

2. Երկու հարևան թագավորների միջև դժտություն, ապա և թշնամություն է առաջանում, «ոչինչ բանիւք արամբ միով անարգաւ, որ ոչինչ քան զդև էր մոլորութեամբ», այն է՝ Փխակի միջոցով. սրա «ենենգախոսութիւնը»։

3. «Ոչինչ բանը» Տիրանին պատկանող «Ծարտուկ ճանճկեն» ձին է, որին ուզում է տիրանալ Վարազ Շապուհը՝ ներսեհ արքայից արքայի Ատրպատականի իշխանը։

4. Վարազ Շապուհի նենգ ծրագրով «հյուրագնացությունը» Տիրանի մոտ։

5. Տիրանի «վարկպարագի», «առ ի ցոյցս» կազմակերպած «զոյգնագիւտ» որսորդութիւնը։

6. Փոխադարձ հյուրասիրություն Վարազ Շապուհի մոտ. խնջույքի ժամանակ «յանկարծօրէն, յայլակարծուց, յանկարծուստ» Տիրանի ձերբակալությունը. նրա գանձի ու ստացվածքի ավարառությունը, կնոջ ու որդիների գերեվարությունը Պարսկաստան։

7. Տիրանին կուրացնելը Դալարիսում «ածուղով»—«փոխանակ Դալարեացս անուան Ածուղ անուն լիցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց»։

8. Հայերի վրեժխնդրությունը և լացուկոծը—«կոծ եղեալ աշխարանօք լային զիւրեանց բնակտէրն, զարքայն Հայոց. սոյնպէս և զկորուստ աշխարհին»։

Իսկապես այստեղ վերջանում է այս «հյուղը», քանի որ Տիրան թագավորը, իբրև գործող անձ, ասպարեզից դուրս է գալիս։ Ինչպես տես-

նում ենք. այս «եղուզին» վախճանը սգավոր է և հոռետեսական։ Սակայն, հոռետեսությունն ու անհուսությունը խորթ ըմբռնումներ են ժողովրդական հասկացության, աշխարհայեցության համար։ Ժողովուրդը նույնիսկ ամենաողբերգական պայմաններում միշտ լավատես է, մի ելք է որոնում և գտնում վհատությունը վանելու, նոր հնարներ և միջոցներ է հայթայթում ազատվելու ծանր դրությունից և բախտավոր կյանք ստեղծելու համար։ Ո՞րն է այդ փրկության դուռը. ում միջոցով և ինչպես է նա բարելավում իր վիճակը։ Տիրանի վեպը դրանց պատասխանն էլ է տալիս, շարունակելով իր ասքը։

9. «Զանձինս անձամբք» մխիթարելով՝ հայերը որոշում են վրեժխնդրությունը շարունակել և օգնության դիմել պարսիկների ոխերիմ թշնամի հույներին—Հռոմեական կայսրին, ուստի դեսպանություն են ուղարկում Բյուզանդիոն։

10. Կայսրը մեծ զորքով օգնության է հասնում հայերին, Անդովկ և Արշավիր նախարարների հետ երեք հոգով «ի շինականութեան կերպարանս, ի կաղամբավաճառի օրինի» լրտեսում են Պարսից բանակն «ի գեւղն, որ անուանեալ կոչի Ոսխայ (տրբ. Ախսայ)»։

11. Հունա-հայկական զորքը ջախջախում է Պարսից բանակը՝ «և ոչ զմի ոչ ապրեցուցանէին», «զկանայս թագաւորին և զբամբիշն, և զբանուկան ընդ նոսին, և զգանձս արքունի, և զինչս և զստացուածս նոցին ընդ նմին ի գերութիւն վարէին»։ Պարսից արքան (Ներսեհ=Շապուհ ըստ կրկին պատմվածքի) մազապուրծ, «պէշասպիկ», մի սուրհանդակ առաջին փախչում է։ Հայաստանն ազատվում է պարսիկների բռնակալական լծից։

12. Պարսից թագավոր Ներսեհը քննում է այդ աղետալի պատերազմի պատճառները և իմանում է, որ Շապուհ Վարազի բանսարկությամբ է այդ ամենը տեղի ունեցել «վասն ձիոյ միոյ», «վասն կաշոյ միոջ»։ Նա մորթազերծ է անել տալիս այդ բանսարկու նենգախոսին և «ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց», կայսրից հնազանդ խաղաղություն խնդրում։

13. Կայսրը համաձայնում է պայմանով, որ, նախ՝ Ներսեհը վերադարձնի գերի հայ թագավորին ընտանյոք հանդերձ, ապա ինքը կընդառաջի պարսիկների ցանկությանը։ Պայմանն երկուստեք ի կատար է ածվում «մեծ պատուով», «զանձիւք ընծայիւք և ստացուածովք հանդերձ»։

14. Պարսից թագավորի ուրախությունը, գոհունակությունն ու երախտագիտությունը։

15. Խաղաղություն, ցնծություն և շինություն Հայաստանում։

Սա է Տիրանի վեպի կառուցվածքի անպաճույճ սխեման, որ վերականգնել ենք ըստ նույն Բուզանդի «Հայոց պատմության» երկու տարբեր, ժամանակով իրարից բավականաչափ հեռու ընկած, հաղորդագրության համեմատ։ Ինչպես տեսանք, դրանցից մեկը կապված է Տիրանի գերեվարության ու Արշակի գահակալության, մյուսը՝ Արշակի գերեվարության և Պապի թագավորելու հետ։

Մի հարևանցի, թռուցիկ հայացք բավական է համոզվելու, որ այդ երկու բախտորոշ պատերազմների նկարագրությունները միևնույն իրադարձությանն են վերաբերում։ Գործողության աստիճանական, հետևողական զարգացումը միևնույնն է, իսկ գործող անձերը՝ դերակատարները տարբեր։ Ինչպե՞ս բացատրել այս հանգամանքը. ինչով է պայմանավոր-

ված այդ նմանությունը կամ, եթե կուզեք, շփոթումը, Արդյոք Բուզանդը՝ հեղինակն ինքն է շփոթել կամ, թերևս, գիտակցաբար «երկրորդել», կրկին պատմել՝ հարասելով այդ ամենը ի փառս հաղթապանծ հայ զորքի, թե անքննադատաբար քաղել է իր սկզբնաղբյուրի հաղորդումները և մեքենայարար վերապատմել իր գլխում։

Այս հարցին հնարավորության սահմաններում բավարար պատասխան տալու համար մենք պետք է վերհիշենք Հայաստանի քաղաքական դրությունը հռոմա-պարսկական ռազմական-դիվանագիտական հարաբերությունների կապակցությամբ։ Այստեղ էլ պրոֆ. Ն. Ադոնցի հաճախ վկայակոչած ուսումնասիրությունը նպաստում է մեզ դրածս հարցերը պարզաբանելու գործում։

«Փավստոսը, ինչպես արդարացի դիտում է Ն. Ադոնցը, լրիվ տեղյակ չէ Դաղերիոսի և Նարսեհի պատերազմի հետևանքների մասին։ Ինչպե՞ս բացատրենք այս հանգամանքը։ Ն. Ադոնցը չի բացատրում։ Մեր կարծիքով, այդ հանգամանքի միակ բանական բացատրությունն այն է, որ «Հայոց պատմության» հեղինակը ձեռքի տակ չի ունեցել ոչ միայն պաշտոնական վավերագրեր, այլև որևէ գրավոր սկզբնաղբյուր։ Նա օգտվել է բացարձակապես բանավոր ժողովրդական զրույցներից, ավանդություններից և վեպից, որոնց ասացողները (վիպասան, գուսան) պահպանելով իրադարձության ընդհանուր բնույթն ու դեպքերի վիպական հաջորդականությունը, շփոթել են թե գործող անձերին և թե գործողության ժամանակն ու տեղը, հարակցել են տարբեր վիպական մոտիվներ ու միջադեպեր և վերագրել մերթ Տիրանին, մերթ Արշակին, որոշ բան էլ փոխանցել սրա ժառանգ Պապին։ Մեր այս կարծիքն իր հավաստումն է գտնում նաև մի շարք հույն աղբյուրների հավելյալ վկայություններով։

Այդ պատերազմի հետևանքների, ինչպես նաև դիվանագիտական բանակցությունների ընթացքի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում 6-րդ դարի հույն հեղինակ և դիվանագետ Պետրոս Պատրիկիոսը, որն օգտագործած է եղել հավաստի վավերագրեր և որի պատմական երկասիրությունից միայն պատառիկներ են մնացել։ Այդ հատ ու կտորները, հարկավ, չի կարելի ամբողջությամբ վավերագիր համարել, քանի որ բանակցությունների ընթացքը՝ ըստ նրա շարադրանքի՝ ցցուն կերպով մատնում է հեղինակի նկարագրության անհատական և միտումնավոր երանգավորումը, բայց և այնպես բանակցությունների արդյունքը՝ դերեղարձության գծով, ինչպես նաև երկու հզորագույն պետությունների ազդեցության սֆերաների սահմանագծումը լրիվ և իրական պատմական է։ Պայմանագրով նախատեսված սահմանները՝ համարյա անխախտ՝ պահպանել են մինչև Հովիանոսի խայտառակ դաշնագրությունը 363 թ.։

Պարտված Նարսեհը Դաղերիոսի հետ բանակցելու համար Պետրոս Պատրիկիոսի վկայությամբ մի դեսպանություն է ուղարկում Աֆֆարբանի գլխավորությամբ և արքապետի ու Վարսավորսի անդամակցությամբ [Ἀφφαρβὰ καὶ ἀρχαπέτου καὶ Βαρσαβώρσου ὧν ὁ μὲν ὕπαρχος ἦν πραιτωρίων, ὁ δὲ ἕτερος τὴν τοῦ Συμιου εἶχεν ἀρχήν].[1]

Աֆֆարբան՝ Դաղերիոսին ուղղած իր ճառը, համեմելով արևելյան

1 Н. Адонц, անդ, էջ 347։

գունագեղ իմաստությամբ՝ «ասաց, որ հանձնարարություն ունի արքայից, որ նա արդարացի է համարում իր թագավորության բախտը վստահելու հոռոմայեցիների մարդասիրությանը, ուստի նա չի քննում այն պայմանները, որոնցով պիտի խաղաղությունը կայանա, և ամեն ինչ ներկայացնում է կայսրի բարի հայեցողությանը։ Նա սոսկ մի խնդիրք ունի, այն է՝ վերադարձնել իր երեխաներին ու կանանց, և հավատացնում է, որ նրանց վերադարձնելու դեպքում նա այդ ավելի մեծ բարիք կհամարի, քան եթե ինքը հաղթեր զենքով։ Եվ այժմ էլ նա չի կարող ըստ արժանույն շնորհակալություն հայտնել այն բանի համար, որ նրանք գերության մեջ գտնվելով՝ չէին ենթարկվում ոչ մի վիրավորանքի, այլ նրանց հետ վարվում էին այնպես, ինչպես իրենց (արքայական) դիրքին վերադարձողների հետ»։ (Որքան համեմատիչ է Ռուգանդի համապատասխան միջադեպին՝ «Ճերմակաձին գինի արբցէ»։ Մի դեպքում՝ դեպքի իրական պատկերում, մյուս՝ վիպական անդրադարձում)։

Կայսրն ի պատասխան հայտարարում է, որ՝ հետևելով իր նախնիներին, նա խնայում է. «Եվ հրամայեց դեսպանին հայտնել արքային հռոմայեցիների վեհանձնության մասին... և հուսադրել, որ շուտով նրա մոտ կգնան նաև դերիները՝ համաձայն կայսրի հրամանին»։[1]

Պետրոս Պատրիկիոսը մի առ մի թվում է նաև այն «աշխարհները», որոնք՝ ըստ պայմանագրի՝ անցնում էին հոռոմեական գերիշխանության ներքո, ինչպես նաև գծում է Հայաստանի արևելյան սահմանը, այն է, Զինթա (Ζίντα) ամրոցը, որը սահմանակից է Մարաստանին, և այլն։[2]

Խաղաղության այս պայմանագիրը կնքված էր 40-ամյա ժամանակամիջոցի համար, այսինքն՝ 298—337 թ. թ.։ Պատմությունից հայտնի չէ, որ դա խախտված լիներ պայմանադրվող պետություններին կողմից։ Ճիշտ է, այդ ժամկետից հետո տեղի էին ունեցել մի շարք բախումներ, ավելի փոքր չափի կռիվներ հույների և պարսիկների միջև, բայց և այնպես պայմանագրության նախագծված սահմանները չէին խախտված և միջազգային իրավական ուժ ունեին, մինչև Հովիանոսի խայտառակ պարտությունն ու նոր պայմանագիրը 363 թ., որով Հոռոմեական կայսրությունը հրաժարվում է 298 թ. նվաճումներից և ընդ սմին նաև Հայաստանից, որը մատնվում է Սասանյան Պարսկաստանի կամայականություններին։

Հայաստանի քաղաքական դրության ընդհանուր նկարագիրը կոնկրետ պատկերացնելու համար անցողակի քննարկենք քառասնամյա խաղաղության պայմանագրին հաջորդող թեկուզ մի տասնամյակի ռազմաքաղաքական անցուդարձերը։

Պայմանագրի ժամկետը լրանալու վրա էր, երբ պարսիկները վերսկսեցին իրենց ռազմական գործողությունը։ Կոստանդիանոս կայսրը դիմում է նրանց վրա, սակայն ճանապարհին՝ Նիկոմիդիայում վախճանվում է 337 թ. մայիսի 22 ին։ Շապուհ II պաշարում է Մծբինը, բայց ապարդյուն, և ստիպված է լինում դադարեցնել պաշարումը և հեռանալ։

Մծբինի այս պաշարումը տեղի ունեցած պիտի լինի հավանաբար 338 թ.։ Ս. Ադոնցը կարծում է, թե հենց այս պատերազմի կապակցու-

[1] Н. Адонц, անդ. էջ 243—4 [Excerpta Petri Patricii, Ad Romanos, c. XII].
[2] Н. Адонц, անդ. էջ 244—5 [Excerpta Petri Patricii, Ad Gentes, c. III].
[3] Н. Адонц, անդ, էջ 251

թյամբ է, որ Հայաստանում՝ ըստ Հուլիանոսի՝ ծայր են առել ներքին միջ-նախարարային կռիվներ և գժտություններ, որոնց հետևանքով թագավորը (անունը չի հիշատակված) փախուստի է դիմել հռոմեական սահմանները, ապա Կոստանդի միջամտությամբ հայ երկիրը խաղաղացվել է ու հայ թա-գավորը վերադարձել հայրենիք։ Բուզանդը հիշատակում է, որ Տիրանը որոշ ժամանակ եղել է Ծոփաց աշխարհի Բնարեղ բերդում։ Մեղ թվում է, որ ոչ միայն Ն. Ադոնցի ակնարկած Բակուր բդեշխի ապստամբությունը (ըստ Բուզանդի տակավին Խոսրովի ժամանակ),[1] այլև մի շարք ուրիշ միջ-նախարարական խռովություններ ու բախումներ[2] և արտաքին թշնամիների ոտնձգություններ տեղի են ունեցել հենց այս, Հուլիանոսի ակնարկած ժա-մանակաշրջանում, և դրանց հիշատակությունը պահպանված կա Բուզանդի Պատմության մեջ։[3]

Հուլիանոսի վկայության համեմատ՝ հայ փախստական թագժառանգին (=թագավորին) Կոստանդի կողմից Հայաստանի թագավոր կարգելու մասին պարզ հիշատակություն ունի նաև Մովսես Խորենացին։ Մի կողմ թողած Խորենացու սխալ ժամանակագրական հաշիվները՝ երկու տարբեր պատմա-քա-ղաքական իրադարձություններ շփոթելը։ Նա այնուամենայնիվ պատմական եղելության իրական պատկերացումն է տալիս։ Խորենացին հաղորդում է, որ Շապուհը հարձակվում է Հայաստանի վրա, Խոսրով Կոտակը գիմադրում է և օգնության կանչում հույներին, «բայց ոչ երկարեալ զկեանս իւր՝ վախճանի»։ Վրթանես կաթողիկոսը Հայաստանի պաշտպանության գործը հանձնում է Արշավիր Կամսարականին, «որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի», վերցնում է Խոսրովի որդի Տիրանին և գնում է կայսրի մոտ, «զի թագաւոր Հայոց ի տեղի հօր իւրոյ կացուսցէ» (Մով. Խորեն., III, Ժ)։ Ապա շարունակում է նա. «Աւգոստոս Կոստանդոս, որդի Կոստանդիանոսի, թագաւորացուցանէ զՏիրան որդի Խոսրովու, և առաքէ ի Հայս հանդերձ մեծաւ Վրթանաւ Որոյ եկեալ, ունի զաշխարհս մեր խաղաղութեամբ հաշ-տութիւն ընդ Պարսս առնելով և ոչ պատերազմունս» (III, ԺԱ)։

Հռոմա-պարսկական այս պատերազմը, որ տեղի է ունեցել Կոստանդի և Շապուհի թագավորության ժամանակ, ընդունված է կոչել Սինղարայի կամ Նարսեի (=Ներսեհի) ճակատամարտ։ Հուլիանոսը Կոստանդին նվիրած

---

[1] Բուզանդ, III, Թ։

[2] «Բայց յայնմ յանմիա թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնա-մեաց, այլև բարեկամք բարեկամաց և բնակիք ընկերաց դաւանանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ Հայաստան երկրին, և բեւր ազգի ազգի թշնամութիւնս գոր-ծէին... Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան։ (Խոսքը Հայր Մարգպետի մասին է)... Զբաղում ի նախարարացն հա քաջութեամբ առանց ինքասու կռուոցն, և խանդաբեաց զմեծ աւերութիւն թագաւորութեանն» (Բուզ., III, ԺԸ)։

[3] «Թանդի ի ժամանակաց ի թագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ զաւերն ճանա-չելոյ՝ արար խաղաղութիւն, և լուեցոյց շուրջ զթշնամիս նոցա, զի ցածոյց աւեր զմարտ պա-տերազմացն ի սահմանաց նոցա, և մինչև յայն ժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամ-բոխի կամ խռովութեան, և ի մեծի խաղաղութեան էին բնակեալք (ակնարկված է 40-ամյա խաղաղությունը 298—337 թ. թ.)։ Ապա ի ժամանակին յայնմիկ յարոյց զօրացոյց զՏՐԴ-ՐՈՒԹԻՒՆՆ սահմանակցաց շուրջ յամենայն կողմանս զթշնամիս նոցա. և ոչ մի ոք ի թա-գաւորացն Հայոց ոչ ոք դատեր նոցա բարեկամ, այլ ամենեքեան թշնամիք» (Բուզանդ, III, ԺԷ)։

իր ներբողական ճառի մեջ ասում է. «Ես քաջ գիտեմ, որ բոլորը տրամադիր են Սինգարայի ճակատամարտը բարբարոսների (=պարսիկների) հազարանակ համարելու. սակայն ես կարծում եմ, որ այդ կռիվը հավասարապես դժբախտ էր երկու բանակի համար էլ...»[1] Այս պատերազմի ժամանակ հռոմայեցիները չէին ցանկանում նախահարձակ լինել։ Պարսից թագավորը (—Շապուհը) հրամայում է իր զորքերին հարձակում գործել, սակայն, տեսնելով հռոմայեցիների մարտաշարքը, վախեցավ՝ ըստ Հուլիանոսի՝ և «մտածում էր շտապ փախուստի դիմել. խորհրդածելով, որ նրան կարող էր փրկել միայն այն. եթե նա վաղորդ անցնէր հնուց ի վեր մեր և նրանց երկրների միջև սահման հանդիսացող գետը»։[1] Շապուհն այդպես էլ անում է. իր ամբողջ բանակը հանձնում է հարազատ որդուն և իր ամենահավատարիմ բարեկամին և ինքը մի քանի ձիավորների առաջնորդությամբ փախուստի դիմում։ Ճակատամարտի հետևանքն այն է լինում, որ թագաժառանգ Ներսեհը իր շքախմբով գերի է ընկնում և սպանվում։

Սինգարայի ճակատամարտի մասին տեղյակ են և այլ հեղինակներ՝ Եվարոպիուսը. Ամմիանուս Մարցելինուսը, ինչպես նաև Փեստուս Ռուփուսը։ Սա գրում է. «Narsensi autem bello, ubi Narseus occidit, superiores discessimus. Nocturna vero in argo Eleiensi prope Singaram pugna, ubi praesens Constantius adfuit».[1]

Ն. Ադոնցը, բերելով հիշյալ հեղինակների վկայությունները, հանդում է հետևյալ ճիշտ եզրակացության. «Փեստուսի Նարսեն Պարսից թագաժառանգն է, Շապուհի որդին, նա, որին հայրը հանձնեց մեզ հետաքրքրող ճակատամարտի հրամանատարությունը։ Կռվի վախճանը հռոմայեցիները համարում էին իրենց համար բարենպաստ՝ Նարսեհի գերության և կործանման պատճառով»։[2]

Սինգարայի կամ Ներսեհյան ճակատամարտի մասին որոշ տեղեկություններ կան, ըստ իս, նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։ Ճիշտ է, այդ վկայություններն իրար չեն հաջորդում և, կարծես, միևնույն իրադարձությունը չեն, քանի որ բաժանված են երկու տարբեր ժամանակների ու դեպքերի, բայց իրականում նրանք միասնական են և արտացոլում են հենց տվյալ պատերազմի պատմական իրադարձությունները, տեղ-տեղ նույնիսկ համարյա բառացի վերարտադրելով օտար սկզբնաղբյուրների արտահայտչական ձևերը։

Մովսես Խորենացին պատմում է. «Իսկ արքայ Պարսից Շապուհ իբրև լուաւ զմահն Խոսրովու, և եթէ որդի նորա Տիրան առ կայսր գնաց՝ զումարէ զօրս բազումս ի ձեռն Ներսեհի եղբօր իւրոյ, որպէս թէ թագաւորացուցանել գնա Հայոց խորհեցեալ, և առաքէ յաշխարհս մեր, իբրև անառաջնորդ զսա վարկուցեալ։ Որոց պատահեալ քաջին Արշաւիրի Կամսարականի հանդերձ ամենայն Հայաստանեայցս զօրու, ճակատ տուեալ ի Մուղն անուանեալ դաշտի։ Եւ թէպէտ և բազումք ի մեծամեծ նախարարացն անկան ի պատերազմին, սակայն յաղթեալ Հայոց գնդին՝ փախստական առնին զզօրս Պարսից, և պահեն զաշխարհս մինչև ցգալն Տիրանայ։»[3]

---

1 Н. Адонц, անդ, էջ 252–3։
2 Н. Адонц, անդ. էջ 253։
3 Մովսես Խորենացի, III, ԺԵ։

Դեպքը, ուրեմն, տեղի է ունենում նախքան Տիրանի թագավորելը։

Խորենացու երկրորդ վկայությունը հետևյալ վերնագիրն է կրում. «Պատերազմ Շապհոյ ընդ Կոստանդհայ։ Այստեղ Շապուհը Տիրանի բարեկամն ու դաշնակիցն է՝ «առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց. մինչև զորավիդն օգնականութեան եղեալ՝ թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն աղգաց...»։ Հարևան թագավորներին նվաճելուց, ինչպես նաև իր թիկունքն ապահովելուց հետո՝ Շապուհը «յարձակեցաւ ի Միջերկրեայս ե ի Պաղեստինէ։ Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս՝ սպառազինեցաւ ընդդէմ Պարսից. և տուեալ ճակատ, երկոքին կողմանքս պարտեցան. բազում ոմեկան յերկոքանչիւրոցն. և ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց. մինչև ի հաւանութիւն եկեալ՝ արարին խաղաղութիւն ամս սակաւս»։

Ինչպես տեսնում ենք, այս երկու, իրարից տարբեր վկայությունների մեջ գործող անձերը նույնանում են հունա-հռոմեական պատմիչների հաղորդագրությունների հերոսների հետ։ Հռոմայեցիների կողմից հանդես է գալիս և՝ ըստ օտար պատմագիրների, և՝ ըստ Խորենացու՝ Կոստանդ կայսրը, պարսիկներից՝ Շապուհ արքան ե նրա որդին՝ Ներսեհը (ըստ Խորենացու՝ եղբայրը), հայերից՝ Տիրանը։ Գործողության վայրը նույնն է՝ Միջագետքը, կռվախնձորը Հայաստանն ու Հռոմեական կայսրության արևելյան սահմանները, իսկ կետ-նպատակը՝ 298 թ. պայմանագրի ոչնչացումը պարսիկների կողմից։ Մովսես Խորենացու վկայության ամենամեծ տարբերությունն օտար աղբյուրներից այն է, որ մեր պատմահայրը հայերի գործուն մասնակցությունն ավելի ակնբախ է հանդես բերում, կարելի է ասել, ամբողջ իրադարձությունն «աղգայնացած» է նկարագրում։

Ն. Ադոնցը՝ հիմք ընդունելով հույն և լատին սկզբնաղբյուրների վկայությունները, լուծում է նաև այն առեղծվածը, որի համեմատ 298 թ. իրադարձությունները Բուզանդը կապում է Տիրանի թագավորության ե ողբերգական բախտի հետ։ Նա հետևյալ կերպ է փաստարկում՝ Գաղերիոսի օրով 298 թ. հռոմայեցիների հետ պատերազմ է վարում Պարսից արքա Ներսեհը, որի որդին, կինը և թագավորական ընտանիքի մյուս անդամները գերի են ընկնում կայսրի ձեռքը։ Սինգարայի ճակատամարտում Կոստանդը գերում է արքայազնին, որը կրում է այդ նույն անունը՝ Ներսեհ (Նարսե)։ Հայկական ավանդությունը ըստ Փավստոսի՝ պատմության տարբեր ժամանակներին վերաբերող այդ երկու իրադարձությունը միաձուլել է, ընդ որում փորձության քար են հանդիսացել Ներսեհ (Նարսե) անունը ու երկու դեպքում էլ Պարսից գահի ժառանգների համանման վիճակը։

Այս կապակցությամբ Ն. Ադոնցին հաջողվում է ճշտել նաև Սինգարայի ճակատամարտի, ինչպես նաև Տիրանի գահազրկության, ապա և Արշակի գահակալության տարեթվերը։ Նա այսպես է փաստարկում՝ Կոստանդ կայսրը սպանվում է 350 թ.։ Նա վերջին անգամ Մծբինում է եղել 346 թ., որտեղից մեկնել է Մեդիոլան և այստեղ է գտնվում 346 թվին.

---

1 Մով. Խորեն., III, ԺԲ. Հմմտ. ընդգծած տողերի իմաստը հուլիանոսի հետևյալ բնորոշման հետ՝ ἐγὼ δὲ ἐκείνην τὴν μαχητὴν καὶ μεν ἐνεργὴν τοῦ σπουδαιοῦ καὶ τὰ etc.— «իսկ ես կարծում եմ, որ այս ճակատը հավասարապես գժբախտ էր երկու բանակի համար էլ» և այլն։

1 Ն Ադոնց, անդ, էջ 283—4։

դարձյալ Մծբինի մի այլ պաշարում եղել է 350 թվին. ըստ Հուլիանոսի «Մինգարայի ճակատամարտը տեղի է ունեցել Մծբինի այս պաշարումից վեց տարի առաջ։ Հետևաբար, եզրափակում է Ն. Ադոնցը, հիշյալ ճակատամարտը պետք է թվագրել 345 թ.։ Փավստոսի պատմելով,—շարունակում է նա,—հայ թագավոր Տիրանը գերի է տարվել պարսիկների կողմից նախքան այն ճակատամարտը, որի ժամանակ սպանվել է Նարսեն, և միայն խաղաղությունը կնքելուց հետո նրա տեղը նշանակվում է նրա որդին՝ Արշակը։ Ուրեմն, եթե ոչ Տիրանի անկումը, ապա համենայն դեպս Արշակի գահ բարձրանալը պետք է 345 թ. եղած լինի։ Ամենից հավանականն այն է, որ Տիրանը գահընկեց է եղել 344 թվին»։[1]

Այստեղ մենք ընգհատում ենք Ն. Ադոնցի պատմա-ժամանակագրական հետազոտությունը։ Բուզանդի «Հայոց պատմության» ժամանակագրության ճշգրտմանը նվիրված են նաև պրոֆ. Ց. Մարկվարտի մանրակերկիա ուսումնասիրությունները։[2] Անվանի հայագետի ճշտած ժամանակագրական տվյալները շատ են տարբերվում Ն. Ադոնցի եզրակացություններից. բայց մի հիմնական հատվածում, որը ներկայումս հետաքրքրում է մեզ, նրանք համատեղ են, այն է՝ որ Բուզանդի III, Ի և ԻԱ գլուխներում նկարագրված իրադարձությունները վերաբերում են Գաղերիոսի և Ներսեհի 297 98 թ. թ. պատերազմական դեպքերին և անաքրոնիզմի հետևանքով վերագրվել են Տիրանին ու Սինգարային կամ Ներսեհյան պատերազմին։

Ն. Ադոնցը փորձում է անդամ լուսաբանել և պատճառաբանել այդ անաքրոնիզմը. դնելով, որ դրա միակ հիմքը Ներսեհ անունների նմանությունն ու Գարսից գահի ժառանգների դժբախտ վիճակի զուգադիպությունն է։ Այս եզրակացությունը, սակայն, մենք համարում ենք ոչ լրիվ չափով բավարար և համոզկեր։ Հարց է առաջանում, թե ինչու այդ իրադարձությունները պետք է անպայման կապվեին Տիրանի և ոչ թե Խոսրովի կամ Արշակի հետ. ինչու Դիոկղետիանոսի կամ Կոստանդի փոխարեն հայ ավանդության մեջ հանդես է գալիս Վաղեսը. ինչու այդ իրադարձությունը կրկին պատմվածքով երկրորդված է Գապ թագավորի ժամանակ և այլն, և այլն։

Այդ հարցերը կփորձենք լուսաբանել հոդվածիս երկրորդ գլխում։

(Շարունակելի)

[1] Н. Адонц, անդ, էջ 254—5։

[2] Prof. Josef Markwart, Die Geschichte u. Sagen v. Alten Eran, Anhang, 1895, և ավելի մանրամասն „Die Entstehung der armenischen Bistümer", Roma, 1932, „Orientalia Christiana". Vol. XXVII, 2.